ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<10>> դեկտեմբեր 2021թ. ՆՄՈ/539-2021

ք. Արմավիր

## <<ՏԱԼՎՈՐԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով <<Տալվորիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի նոյեմբերի 9-ի դիմումը.

***որոշում եմ՝***

1. 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու հերթական ընտրություններին գրանցված <<Քաղաքացիական Պայմանագիր>> կուսակցության ցուցակով ավագանու անդամի թեկնածու հանդիսացող Մարինե Սաֆարյանին, նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը, օրենքի ուժով ազատել ծառայողական պարտականությունների կատարումից, այդ ժամանակահատվածում նրա բացակայությունն աշխատանքից համարել հարգելի՝ առանց վարձատրության պահպանման:
2. 2021 թվականի նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը <<Տալվորիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը վերապահել նույն կազմակերպության ուսուցչուհի Ամալյա Սահակյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 10.11.2021 18:10:37 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230